


[236740]



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«19» ասպիտի 2017թ.

N 67- Ն/1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 10 ԲԱԺՆԻ 06 ԽՄԲԻ 01 ԴԱՍԻ «02. «ՁՈՐԱԿ» ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՆՋԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ» ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշման հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետի և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման 7.2 կետի հանձնարարականը


Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 10 բաժնի 06 խմբի 01 դասի «02. «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ննջարանային մասնաշենքի տարածքում բնակվող ընտանիքներին բնակարանով ապահովում» ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին պետական աջակցության 2017 թվականի

միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ միջոցառումների ծրագիր) համաձայն հավելվածի:

2. Միջոցառումների ծրագիրը հրապարակել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական վեբկայքում:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավարին:



Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2017թ. սեպտեմբերի 19 N 67-Ն/Մ հրամանի

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 10 ԲԱԺԻ 06 ԽՄՔԻ 01 ԴԱՍԻ «02.
«ՁՈՐԱԿ» ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՆՋԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՈՎ
ԱՊԱՀՈՎՈՒՄ» ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Հ/հ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքները	Արդյունքային ցուցանիշները	Պատասխանատու կատարողը(կատարողները)	Կատարման ժամկետը	Անհրաժեշտ ֆինանսավորումը(հազ.դրամ)	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7	8
1.	Մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային	Բնակարաններով ապահովման գործընթացի իրավական կարգավորում	ՀՀ կառավարության որոշման առկայություն	Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչություն	մայիս	չի պահանջվում	-

	կազմակերպության ննջարանային մասնաշենքի տարածքում բնակվող ընտանիքներին բնակարաններով ապահովման նպատակով բնակարանի գնման վկայագրերի տրամադրման կարգը»						
2.	Բնակարանների գնման վկայագրերի տրամադրումը	Բնակարանով կապահովվի «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի ննջարանային մասնաշենքի տարածքում բնակվող 9 ընտանիք և «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի նրանց կողմից զբաղեցրած սենյակները նպատակային կօգտագործվեն ՊՈԱԿ-ի կողմից	9 ընտանիքների բնակարաններով ապահովումը	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	հուլիս-դեկտեմբեր	52,350.0 հազ դրամ	ՀՀ պետական բյուջե